[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Մեթոդ	[3] Համար
15	Դեկտեմբեր	2022 թ.		Ա	725345822
[4] Մատակարարման ամսաթիվ				Հարկադրող հաշվի	
15	Դեկտեմբեր	2022 թ.		Սերիա	Համար
				Հարկադրող հաշվի գրության ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 1 5 0 3 4 4 8
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԱՆԿԱՆՈՒ ՀԵՐԱՑՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 1 5 0 3 4 4 8 / 1
[11] Բանկային տվյալները	ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ N 11500166513800
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇԻ ԹԱՂԱՄԱՍ Կոդյունի 2
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (Ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 5 8 3 2 4 1
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	N
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ Կ. ՍԱՐԳՍՅԱՆ Փ. 5
[19] Լրացուցիչ տվյալներ	
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր: Համար
	Ամսաթիվ

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայություններ (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	չափման միավոր	քանակը (ծավալը)	Միավորի գինը	Զեղչը(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Ատամնաբուժական փարձաքննություն զոր ԼՊ1 002Հ 01 20	հատ	1	200000		200000	20	40000	240000
Ընդամենը						200000	X	40000	240000

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354

Անուն, ազգանուն

15/12/2022 11:52:06

Ստացող՝

(կազմակերպության անվանումը, անուն, ազգանուն)

(կազմակերպության անվանումը, անուն, ազգանուն)

ԼԴ1/0025/01/20

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կրկնակի դատահոգեբանական հանձնաժողովային փորձաքննություն նշանակելու միջնորդության վերաբերյալ

21.03.2022թ. ք.Վանաձոր

Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը նախագահությամբ դատավոր Լ.Ալավերդյանի, քարտուղարությամբ Մ.Մարտիրոսյանի, մասնակցությամբ մեղադրող Բ.Մուրադյանի, տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա.Ղազարյանի, ամբաստանյալ Ա.Մուրադյանի, պաշտպաններ Վ.Բաղալյանի, Ա.Խաչատրյանի, դռնփակ դատական նիստում քննության առնելով պաշտպանների միջնորդությունը ամբաստանյալ Ա.Մուրադյանի նկատմամբ կրկնակի դատահոգեբանական հանձնաժողովային փորձաքննություն նշանակելու վերաբերյալ,

Պ Ա Ր Զ Ե Ց

2019 թվականի օգոստոսի 18-ին ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է թիվ 53100519 քրեական գործը, որով ժիրայր Հարությունի Բասմաջյանը ճանաչվել է տուժող:

Նույն օրը Արեն Գագիկի Մուրադյանը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Ստեփանավանի բաժին և ժամը 18:50-ին ձերբակալվել:

2019 թվականի օգոստոսի 21-ին վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացրել Արեն Գագիկի Մուրադյանին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և 185-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին և նրան մեղադրանք է առաջադրվել:

Նույն օրը վարույթն իրականացնող մարմինը Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) է ներկայացրել թիվ 53100519 քրեական գործով մեղադրյալ Ա.Մուրադյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն, որը Դատարանի 2019 թվականի օգոստոսի 21-ի որոշմամբ բավարարվել է և մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը 2 /երկու/ ամիս ժամկետով, որից հետո Ա.Մուրադյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքի ժամկետը Դատարանի համապատասխան որոշումներով շարունակաբար երկարացվել է մինչև 2020 թվականի օգոստոսի 18-ը:

2020 թվականի մայիսի 6-ին վարույթն իրականացնող մարմինը ստացել է մեղադրյալ Արեն Գագիկի Մուրադյանի վերաբերյալ իրականացված դատահոգեբանական

փորձաքննության՝ 2020 թվականի ապրիլի 28-ի թիվ 19-2271 եզրակացությունը (այսուհետ նաև՝ եզրակացություն):

2020 թվականի հուլիսի 15-ին որոշում է կայացվել Արեն Գագիկի Մուրադյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու ու նոր մեղադրանք առաջադրելու մասին և նույն օրը վերջինիս մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

2020 թվականի հուլիսի 30-ին հիշյալ քրեական գործի նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն և դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից որոշում է կայացվել գործով մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին և գործն ըստ ընդդատության ուղարկվել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Քրեական գործի դատաքննության ընթացքում պաշտպանության կողմի միջնորդության հիման վրա 2022 թվականի փետրվարի 14-ին հարցաքննվել է եզրակացությունը կազմած փորձագետ Անի Վարդանյանը:

2022 թվականի մարտի 18-ին կայացված դատական նիստի ժամանակ պաշտպանության կողմը միջնորդություն է ներկայացրել Ա.Մուրադյանի նկատմամբ կրկնակի դատահոգեբանական հանձնաժողովային փորձաքննություն նշանակելու վերաբերյալ՝ շեշտադրելով հետևյալ հանգամանքները՝

«... ա) Եզրակացությունում նշվել է, որ. «Հաշվի առնելով հետազոտվող իրավիճակի վերաբերյալ ներկայացված քրեական գործի նյութերում առկա տեղեկությունները, փորձաքննության հոգեբանական մասի շրջանակներում իրականացված փորձագիտական զրույցի ընթացքում Արեն Մուրադյանի կողմից հայտնած տեղեկությունները, ինչպես նաև հոգեբանական փորձարարական հետազոտության արդյունքները, հետահայաց (ռետրոսպեկտիվ) վերլուծության ենթարկելով դեպքի ժամանակահատվածում Արեն Մուրադյանի հոգեվիճակը՝ եզրակացվել է, որ հետազոտվող իրավիճակում Արեն Մուրադյանի հոգեվիճակի առանձնահատկությունները չեն համապատասխանել ֆիզիոլոգիական կամ կումուլյատիվ աֆեկտի դինամիկային, չափանիշներին և դրսևորման առանձնահատկություններին, դրսևորվել է հետաֆեկտային փուլին բնորոշ ասթենիզացիայի բացակայություն, ինչն արտահայտվել է ժիրայր Բասմաջյանին դանակով հարվածներ հասցնելուց հետո ակտիվ և կամային գործողություններ (ժիրայր Բասմաջյանի տունն այրելը, այնուհետև գետի մոտ գնալը, տանից հագուստ վերցնելը և գետի մոտ այն փոխելը, եղբոր հետ հեռախոսազրույց ունենալը և վերջինիս հետ դեպքի վայր գնալը) իրականացնելով, ուստի հետազոտվող իրավիճակում Արեն Մուրադյանը ֆիզիոլոգիական կամ կումուլյատիվ աֆեկտի վիճակում չի գտնվել, գտնվել է խիստ լարված հոգեվիճակում: (...)»:

բ) Քրեական գործի դատաքննության ընթացքում եզրակացությունը կազմած փորձագետ Անի Վարդանյանն ի պատասխան պաշտպանների հարցերի ցուցմունք է տվել այն մասին, որ՝

1. Սույն գործով աֆեկտին բնորոշ առաջին և երկրորդ փուլերն Արեն Մուրադյանի մոտ ըստ էության առկա են եղել, սակայն բացակայել է երրորդ փուլը, ինչով էլ պայմանավորված, ինքը հանգել է Ա.Մուրադյանի մոտ աֆեկտի բացակայության մասին հետևության: Այսինքն՝ հետազոտվող իրավիճակում Արեն Մուրադյանի հոգեվիճակի առանձնահատկությունները չեն համապատասխանել ֆիզիոլոգիական կամ կումուլյատիվ աֆեկտի դինամիկային, չափանիշներին և դրսևորման առանձնահատկություններին, դրսևորվել է հետաֆեկտային փուլին բնորոշ ասթենիզացիայի բացակայություն, ինչն արտահայտվել է ժիրայր Բասմաջյանին դանակով հարվածներ հասցնելուց հետո ակտիվ և կամային գործողություններ իրականացնելով, մասնավորապես՝ ժիրայր Բասմաջյանի տունն այրելը, այնուհետև գետի մոտ գնալը, տանից հագուստ վերցնելը և գետի մոտ այն փոխելը, եղբոր հետ հեռախոսազրույց ունենալը և վերջինիս հետ դեպքի վայր գնալը:

Հարցաքննության ընթացում փորձագետ Ա.Վարդանյանը չկարողացավ պարզաբանել՝ թե 20 տարեկան երիտասարդի մոտ ասթենիկ դրսևորումները պետք է արտահայտվեին անմիջապես, թե պետք է կրեին որոշակի չափով հետաձգված բնույթ, բացի այդ նշեց, որ գիտության մեջ չկան սահմանված հստակ չափանիշներ, թե աֆեկտի երկրորդ փուլի ավարտից որքան ժամանակ հետո պետք է ի հայտ գան երրորդ փուլին բնորոշ՝ ասթենիկ դրսևորումները և թե ինչքան ժամանակ պետք է դրանք տևեն՝ մի քանի վայրկյան, թե ավելի երկար:

Ի պատասխան պաշտպանական կողմի հարցադրմանը փորձագետ Ա.Վարդանյանը չկարողացավ հստակ պարզաբանել (ինչը բացակայում է նաև եզրակացության մեջ) թե աֆեկտի երրորդ փուլին բնորոշ՝ ասթենիկ դրսևորումները Ա.Մուրադյանի մոտ կոնկրետ ինչպես պետք է դրսևորվեին և Ա.Մուրադյանի կողմից իր ցուցմունքներում և փորձագիտական զրույցի ընթացքում հայտնած դրսևորումները՝ գլխապտույտ, սրտխառնոց, մարմի ծանրացում, շարժվելու անկարողություն, կարծես քնից նոր արթնացած լինելն ու քնելու ցանկությունը արդյոք աֆեկտի երրորդ փուլին բնորոշ դրսևորումներ չեն և փորձագետը կոնկրետ ինչ գիտական մեթոդով է առաջնորդվել դրանք այդպիսին չհամարելով և երրորդ փուլի բացակայությունը արձանագրելով:

Այսինքն՝ մեր կարծիքով, փորձագետ Ա.Վարդանյանն ինչպես եզրակացությամբ, այնպես էլ իր ցուցմունքով չկարողացավ գիտականորեն հիմնավորված հետևություններով հաստատել, որ Ա.Մուրադյանի մոտ դեպքից անմիջապես հետո առաջացած դրսևորումները չեն համապատասխանել աֆեկտի երրորդ փուլին բնորոշ ասթենիկ դրսևորումներին ու եզրակացությամբ նշված՝ երրորդ փուլի բացակայության վերաբերյալ հետևությունները առնվազն հիմնավորված չեն ու կասկած են հարուցում:

2. Փորձագետը նշեց նաև, որ ըստ փորձաքննության եզրակացության Արեն Մուրադյանի՝ ֆիզիոլոգիական կամ կումուլյատիվ աֆեկտի վիճակում չգտնվելու հետևությունն ըստ էության հիմնավորված է բացառապես որոշակի կամային գործողությունների կատարմամբ, որն ըստ փորձագետի բնորոշ չէ ֆիզիոլոգիական կամ կումուլյատիվ աֆեկտի երրորդ փուլին:

Ի պատասխան մեր հարցերի փորձագետը, մեր կարծիքով, չկարողացավ հստակ պատասխանել արդյոք աֆեկտի երրորդ փուլում պետք է լինի կամային

գործողությունների բացակայություն, թե կատարվածի ոչ լրիվ կամայինություն (գիտակցվածություն), հակառակ պարագայում եթե խոսք գնա փորձագետի նշած կամային (գիտակցված) գործողությունների բացակայության մասին, ապա գործ կարող ենք ունենալ անմեղսունակության վիճակի, ոչ թե աֆեկտի հետ:

Այսինքն՝ աֆեկտի երրորդ փուլի բացակայությունը բացառապես կամային գործողության իրականացմամբ պայմանավորելը, ըստ մեզ, ճիշտ չէ, քանի որ հոգեկան խիստ հուզմունքի վիճակը չի հանգեցնում անմեղսունակության և խոսք գնալ չի կարող կամային գործողությունների իսպառ բացակայության մասին, այլ հակառակը կարելի է խոսել գործողությունների ոչ լրիվ գիտակցվածության և կամայինության մասին:

3. Հիմք ընդունելով եզրակացության մեջ կատարած հետևությունները փորձագետ Ա.Վարդանյանը նշեց, որ ինքը տարբերակում է աֆեկտի 2 տարատեսակ՝ ֆիզիոլոգիական և կոմուլյատիվ ու Ա.Մուրադյանի մոտ առկա հնարավոր աֆեկտի հարցը փորձաքննել է հենց այդ երկու տեսակների առկայության կամ բացակայության մասով և հանգել հետևության, որ դրանցից երկուսի վիճակում էլ վերջինս չի գտնվել: Ի պատասխան մեր հարցադրման, թե աֆեկտի քանի տարատեսակ կա՝ Ա.Վարդանյանը կրկին պնդեց, որ դրանք երկուսն են՝ կոմուլյատիվ և ֆիզիոլոգիական, որից հետո պաշտպանական կողմը վերջինիս կրկին հարց ուղղեց, արդյոք խիստ լարված հոգեվիճակը նույնպես աֆեկտի տարատեսակ է, թե՝ ոչ, որին ի պատասխան Ա.Վարդանյանը նշեց, որ՝ ոչ:

Դրանից հետո պաշտպանական կողմը մեջբերեց նույն փորձագետ՝ Ա.Վարդանյանի մեկ այլ քրեական գործով դատարանում տված ցուցմունքից մի հատված, որտեղ Ա.Վարդանյանը աֆեկտի տարատեսակները թվարկելիս նշել է, որ՝ ըստ դատահոգեբանական փորձագիտական պրակտիկայում երաշխավորված մասնագիտական գրականության, որը փորձաքննություն կատարելու ժամանակ օգտագործվել է նաև իր կողմից, աֆեկտի (որպես հոգեկան խիստ հուզմունքի) տարատեսակներ են հանդիսանում ֆիզիոլոգիական աֆեկտը, կումուլյատիվ աֆեկտը, ինչպես նաև խիստ լարված հոգեվիճակը, որն էապես ազդել է գիտակցության և վարքի վրա:

Դրանից հետո, կրկին ի պատասխան պաշտպանական կողմի հարցադրումների, Ա.Վարդանյանը նշեց, որ ճիշտ է որոշակի մասնագիտական գրականության մեջ խիստ լարված հոգեվիճակը դասվում է աֆեկտի տեսակների շարքին, սակայն պաշտպանական կողմի համար անհայտ տրամաբանությամբ տեղում հաստատեց, որ թեև Ա.Մուրադյանը գտնվել է խիստ լարված հոգեվիճակում, սակայն նրա մոտ աֆեկտ առկա չի եղել, այն դեպքում, երբ Ա.Վարդանյանն ինչպես եզրակացությամբ, այնպես էլ ցուցմունքով ի սկզբանե հայտնում էր, որ խիստ լարված հոգեվիճակը աֆեկտ չէ, իսկ հետո ընդունեց դրա աֆեկտ լինելու վերաբերյալ մասնագիտական գրականությունում առկա հիմնավորումները, սակայն դուրս գալով եզրակացության սահմաններից տեղում ախտորոշեց աֆեկտի բացակայություն, առանց հաշվի առնելու, որ իր եզրակացության համաձայն ինքն Ա.Մուրադյանի մոտ առկա հնարավոր աֆեկտի հարցը փորձաքննել է երկու տեսակների՝ կումուլյատիվ և ֆիզիոլոգիական, առկայության կամ բացակայության մասով:

Այսինքն՝ փորձագետի հարցաքննության ընթացքում պարզ դարձավ, որ փորձագետը եզրակացությամբ եկել է հետևության, որ Արեն Մուրադյանը թեև չի գտնվել ֆիզիոլոգիական կամ կոմուլյատիվ աֆեկտի վիճակում, սակայն գտնվել է խիստ լարված հոգեվիճակում, մինչդեռ ըստ դատահոգեբանական փորձագիտական պրակտիկայում երաշխավորված մասնագիտական գրականության, որը փորձաքննություն կատարելու ժամանակ հավանաբար պետք է օգտագործված լիներ նաև փորձագետ Ա.Վարդանյանի կողմից, աֆեկտի տարատեսակներ են հանդիսանում՝

I. ֆիզիոլոգիական աֆեկտը,

II. կումուլյատիվ աֆեկտը,

III. խիստ լարված հոգեվիճակը:

Այսպիսով, փորձագետը Ա.Մուրադյանի մոտ դեպքի պահին ախտորոշել է խիստ լարված հոգեվիճակ, սակայն հանգել է հետևության, որ վերջինս դեպքի ժամանակ չի գտնվել աֆեկտի վիճակում, որը սակայն նույնպես աֆեկտի տարատեսակ է համարվում: Մեր կարծիքով, փորձագետ Ա.Վարդանյանը, ինքն իրեն հակասելով և խիստ լարված հոգեվիճակը մեկ աֆեկտ համարելով, մեկ՝ ոչ, այդպես էլ չկարողացավ մասնագիտորեն հիմնավորել, թե ինչու կոնկրետ այս դեպքում մենք ունենք խիստ լարված հոգեվիճակ, սակայն չունենք աֆեկտ:

4. Չնայած այս հարցերին չէր անդրադարձել եզրակացությամբ, սակայն ի պատասխան պաշտպանական կողմի հարցադրումների՝ փորձագետ Ա.Վարդանյանը նշեց, որ գտնում է, որ որ Արեն Մուրադյանի մոտ առկա խիստ լարված հոգեվիճակը էապես ազդել է նրա գիտակցության և հոգեկան գործունեության վրա՝ նվազեցնելով վարքի գիտակցված կառավարման ունակությունը և այն առաջացել ու պայմանավորված է եղել Ժ.Բասմաջյանի կողմից Ա.Մուրադյանի ընկալմամբ իր նկատմամբ իրականացվող հակաբարոյական ու հակահիրավական վարքագծով և այդ իրավիճակում Ա.Մուրադյանը չէր կարող պահպանել իր վարքը գիտակցված կառավարման ունակությունը (դրանով է պայմանավորված նաև՝ դանակով հարվածների բազմաթիվությունը՝ 17 հարված):

5. Անդրադառնալով պաշտպանական կողմի այն հարցին, որ ըստ գործի նյութերի՝ Ժիրայր Բասմաջյանը ոտնձգել է Արեն Մուրադյանի նկատմամբ, այդ թվում՝ իրականացրել է ֆիզիկական ոտնձգություն, որն արտահայտվել է վերջինիս ձեռքերը բռնելով՝ ազատությունը սահմանափակելով, քաշքշելով և սուր գործիքով՝ պատառաքաղով կենսական օրգան համարվող գլխի շրջանում մարմնական վնասվածք պատճառելով, որին հաջորդել կամ համընկել է Ա.Մուրադյանի կողմից դանակով հարվածներ հասցնելը, արդյոք այդ պահին Ա.Մուրադյանը գիտակցել է Ժ.Բասմաջյանի ոտնձգության սկզբի ու ավարտի պահերը, փորձագետ Ա.Վարդանյանը նշեց, որ կապված տվյալ դեպքում Ժ.Բասմաջյանի ոտնձգությունից առաջացած հուզմունքի՝ հոգեվիճակի պատճառով Ա.Մուրադյանին կարող էր թվալ, թե ոտնձգությունը դեռևս չի ավարտվել, շարունակվում է և անհրաժեշտ է պաշտպանվել, այսինքն՝ նույնիսկ կարող էր իրականացվել անժամանակ պաշտպանություն՝ կապված խիստ լարված հոգեվիճակով...»:

Վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 251-րդ հոդվածի 2-րդ մասով, 245-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով ամրագրված իրավակարգավորումները, պաշտպան Վ.Բաղալյանն ընդգծեց, որ քննարկվող դեպքում եզրակացության ուսումնասիրության և այն քրեական գործի նյութերի, այդ թվում՝ փորձագետ Անի Վարդանյանի ցուցմունքի հետ համադրելու արդյունքում պարզվել է, որ եզրակացությունը հիմնավորված չէ՝ դրանում որոշ իրադարձություններ նկարագրվել են ընտրովի սկզբունքով, այն է՝ փորձագետը չի անդրադարձել Արեն Մուրադյանի մոտ առկա խիստ լարված հոգեվիճակի առաջացման պատճառներին, դրա դրսևորումներին, այդ վիճակով պայմանավորված նրա վարքի գիտակցված կառավարելու ունակություն պահպանմանը, այդ վիճակով պայմանավորված Ժ.Բասմաջյանի կողմից դրսևորված ոտնձգությունն ամբողջությամբ ընկալելու և դրա սկիզբն ու վերջը հստակ տարբերակելու հարցերին հավելելով, որ փորձագետը Ա.Մուրադյանի մոտ առկա հնարավոր աֆեկտի հարցը փորձաքննել է բացառապես դրա երկու տեսակների՝ կոմուլյատիվ և ֆիզիոլոգիական, առկայության կամ բացակայության մասով, մինչդեռ, ինչպես պարզվեց հարցաքննության ընթացքում՝ առկա է նաև աֆեկտի երրորդ տարատեսակ՝ խիստ լարված հոգեվիճակ, որը և ախտորոշվել է Ա.Մուրադյանի մոտ, բայց թե ինչու՝ նման հոգեվիճակում գտնվելու պայմաններում, Ա.Մուրադյանի մոտ աֆեկտ չի ախտորոշվել, ինչպես եզրակացությամբ, այնպես էլ հարցաքննությամբ բացահայտել հնարավոր չեղավ: Շեշտադրեց, որ ինչ վերաբերում է աֆեկտի երրորդ փուլին բնորոշ ասթենիկ երևույթների բացակայությանը, ապա փորձագետը այդպես էլ չկարողացավ բացահայտել, թե 20 տարեկան երիտասարդի մոտ ասթենիկ դրսևորումները պետք է արտահայտվեին անմիջապես, թե պետք է կրեին որոշակի չափով հետաձգված բնույթ, բացի այդ նշեց, որ գիտության մեջ չկան սահմանված հստակ չափանիշներ, թե աֆեկտի երկրորդ փուլի ավարտից որքան ժամանակ հետո պետք է ի հայտ գան երրորդ փուլին բնորոշ՝ ասթենիկ դրսևորումները և թե ինչքան ժամանակ պետք է դրանք տևեն՝ մի քանի վայրկյան, թե ավելի երկար, չկարողացավ պարզաբանել նաև, ինչը բացակայում է նաև եզրակացության մեջ, թե աֆեկտի երրորդ փուլին բնորոշ՝ ասթենիկ դրսևորումները Ա.Մուրադյանի մոտ կոնկրետ ինչպես պետք է դրսևորվեին և Ա.Մուրադյանի կողմից իր ցուցմունքներում և փորձագիտական զրույցի ընթացքում հայտնած դրսևորումները՝ գլխապտույտ, սրտխառնոց, մարմի ծանրացում, շարժվելու անկարողություն, կարծես քնից նոր արթնացած լինելն ու քնելու ցանկությունը արդյոք աֆեկտի երրորդ փուլին բնորոշ դրսևորումներ չեն և փորձագետը կոնկրետ ինչ գիտական մեթոդով է առաջնորդվել դրանք այդպիսին չհամարելով և երրորդ փուլի բացակայությունը արձանագրելով:

Վերոշարադրյալի համատեքստում պաշտպան Վ.Բաղալյանը նշեց, որ փորձագետի եզրակացությունն ակնհայտորեն հիմնավորված չէ և դրա հավաստիությունը կասկած է հարուցում միջնորդելով Արեն Գագիկի Մուրադյանի վերաբերյալ իրականացված դատահոգեբանական փորձաքննության՝ 2020 թվականի ապրիլի 28-ի թիվ 19-2271 եզրակացությունը հիմնավոր չլինելու և այն կասկած հարուցելու հիմքով որոշում կայացնել կրկնակի դատահոգեբանական հանձնաժողովային փորձաքննություն նշանակելու մասին՝ դրա կատարումը հանձնարարելով նույն մասնագիտությամբ ուրիշ փորձագետների հանձնաժողովի հարցերի, ի թիվս նախորդ (2019 թվականի հոկտեմբերի 9-ի) որոշմամբ առաջադրված, հետևյալ շրջանակով

ա) հանրորեն վտանգավոր արարքները կատարելու պահին Արեն Գագիկի Մուրադյանը գտնվել է արդյոք աֆեկտի վիճակում, եթե՝ այո, ապա նշել դրա տեսակը,

բ) հանրորեն վտանգավոր արարքները կատարելու ընթացքում Ա.Մուրադյանի մոտ առկա եղել է աֆեկտի երրորդ փուլը՝ ասթենիկ հոգեվիճակը.

գ) 20 տարեկան երիտասարդի մոտ ասթենիկ դրսևորումները պետք է արտահայտվեն անմիջապես, թե պետք է կրեն որոշակի չափով հետաձգված բնույթ և կա արդյոք գիտության մեջ սահմանված հստակ չափանիշներ, թե աֆեկտի երկրորդ փուլի ավարտից որքան ժամանակ հետո պետք է ի հայտ գան երրորդ փուլին բնորոշ՝ ասթենիկ դրսևորումները և ինչքան ժամանակ պետք է դրանք տևեն ու կոնկրետ ինչպես պետք է դրսևորվեն և Ա.Մուրադյանի կողմից իր ցուցմունքներում և նախորդ փորձաքննության ընթացքում՝ փորձագիտական զրույցի ժամանակ հայտնած դրսևորումները՝ գլխապտույտ, սրտխառնոց, մարմի ծանրացում, շարժվելու անկարողություն, կարծես քնից նոր արթնացած լինելն ու քնելու ցանկությունը արդյոք աֆեկտի երրորդ փուլին բնորոշ դրսևորումներ չեն,

դ) հստակ պատասխանել արդյոք աֆեկտի երրորդ փուլում պետք է լինի կամային (գիտակցված) գործողությունների բացակայություն, թե կատարվածի ոչ լրիվ կամայինություն (գիտակցվածություն),

ե) քանի տարատեսակ ունի աֆեկտը (որպես հոգեկան խիստ հուզմունքի վիճակ) և արդյոք աֆեկտի տարատեսակ է հանդիսանում խիստ լարված հոգեվիճակը,

զ) եթե Ա.Մուրադյանի մոտ առկա է եղել խիստ լարված հոգեվիճակ, ապա արդյոք այն էապես ազդել է նրա գիտակցության և հոգեկան գործունեության վրա՝ նվազեցնելով վարքի գիտակցված կառավարման ունակությունը,

է) Արեն Մուրադյանի մոտ առկա խիստ լարված հոգեվիճակը կոնկրետ ինչից է առաջացել և կոնկրետ ինչ դրսևորում է ունեցել, արդյոք այն պայմանավորված է եղել Ժիրայր Բասմաջյանի կողմից Ա.Մուրադյանի ընկալմամբ իր նկատմամբ իրականացվող հակաբարոյական ու հակաիրավական վարքագծով և այն ինչքանով է ազդել Ա.Մուրադյանի գիտակցության և հոգեկան գործունեության վրա, այսինքն Ա.Մուրադյանը ամբողջությամբ պահպանել է իր վարքը գիտակցված կառավարելու ունակությունը, թե՝ ոչ,

ը) նկատի ունենալով, որ քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Ժիրայր Բասմաջյանը ոտնձգել է Արեն Մուրադյանի նկատմամբ, այդ թվում՝ իրականացրել է ֆիզիկական ոտնձգություն, որն արտահայտվել է վերջինիս ձեռքերը բռնելով՝ ազատությունը սահմանափակելով, քաշքշելով և սուր գործիքով՝ պատառաքաղով կենսական օրգան համարվող գլխի շրջանում մարմնական վնասվածք, պատճառելով, որին հաջորդել կամ համընկել է Ա.Մուրադյանի կողմից դանակով հարվածներ հասցնելը, արդյոք այդ պահին Ա.Մուրադյանը գիտակցել է Ժ.Բասմաջյանի ոտնձգության սկզբի ու ավարտի պահերը, թե՝ ոչ, այսինքն՝ Ժ.Բասմաջյանի ոտնձգությունից առաջացած հուզմունքի՝ հոգեվիճակի պատճառով Ա.Մուրադյանը կարող էր չընկալել կամ ճիշտ չընկալել ոտնձգության ավարտի պահը և գիտակցել, որ

անհրաժեշտ է պաշտպանվել կամ շարունակել պաշտպանվել, այսինքն՝ իրականացներ անժամանակ (ուշացած) պաշտպանություն՝ կապված խիստ լարված հոգեվիճակով:

թ) փորձագետներին խնդրել՝ պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն միջնորդության մեջ ներառված չեն, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն հոգեբան-փորձագետների իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

Ամբաստայալ Ա.Մուրադյանը միացավ ներկայացված միջնորդությանը:

Մեղադրող Բ.Մուրադյանը և տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա.Ղազարյանն առարկեցին ներկայացված միջնորդության դեմ նշելով, որ եզրակացությունը որևէ կասկած չի հարուցում, հիմնավոր է, առկա չեն կրկնակի դատահոգեբանական հանձնաժողովային փորձաքննություն նշանակելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումները:

Ուսումնասիրելով միջնորդությունը, դրա վերաբերյալ կողմերի փաստարկները դատարանը գտնում է, որ ներկայացված միջնորդությունը հիմնավոր է և այն ենթակա է բավարարման:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 251-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կրկնակի փորձաքննությունը կատարվում է, երբ փորձագետի եզրակացությունը հիմնավորված չէ կամ կասկած է հարուցում, կամ ապացույցները, որոնց վրա հիմնված է եզրակացությունը, ճանաչվել է ոչ հավաստի կամ խախտվել են փորձաքննության կատարման դատավարական կանոնները: Կրկնակի փորձաքննության կատարումը հանձնարարվում է ուրիշ փորձագետի: Կրկնակի փորձաքննություն նշանակելիս փորձագետի առջև կարող է դրվել նախկին հետազոտությունների ընթացքում կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածության հարցը: Կրկնակի փորձաքննություն կատարելու մասին որոշման մեջ պետք է նշվեն նախկին փորձաքննության արդյունքների հետ չհամաձայնվելու շարժառիթները: Նախկին փորձաքննությունը կատարած փորձագետները կարող են ներկա գտնվել կրկնակի փորձաքննությանը, տալ պարզաբանումներ, սակայն հետազոտմանը և եզրակացություն կազմելիս նրանք չեն մասնակցում:

Նույն օրենսգրքի 245-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ բարդ կամ կրկնակի փորձաքննությունները կարող են կատարվել միանձնյա կամ նույն մասնագիտությամբ փորձագետների հանձնաժողովի կողմից: Կողմի պահանջով փորձագետների հանձնաժողովի կազմում կարող է ընդգրկվել իր կողմից հրավիրված փորձագետը: Միասնական կարծիքի հանգելու դեպքում փորձագետներն ստորագրում են եզրակացությունը: Տարաձայնության դեպքում յուրաքանչյուր փորձագետ կազմում է առանձին եզրակացություն՝ ընդգրկելով բոլոր կամ տարաձայնություններ առաջացրած հարցերը:

Հանձնաժողովային փորձաքննություն կատարելու մասին որոշումը պարտադիր է փորձագիտական հիմնարկի ղեկավարի համար: Եթե փորձաքննության կատարումը հանձնարարված է փորձագիտական հիմնարկին՝ առանց հանձնաժողովային

փորձաքննության պահանջի, ապա նրա ղեկավարն իրավասու է կազմակերպել հանձնաժողովային փորձաքննության կատարումը:

Վերոշարադրյալ իրավանորմերը քննարկման առարկա դարձնելով միջնորդության մեջ նշված հիմնավորումների համատեքստում՝ դատարանը գտնում է, որ սույն գործով առավել հիմնավոր և փաստարկված փորձագիտական եզրակացություն ստանալու, ինչպես նաև քրեական գործի քննության բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունը ապահովելու, իսկ դրա արդյունքում՝ արդարադատության անկողմնակալ իրականացման նպատակով անհրաժեշտ է նշանակել կրկնակի դատահոգեբանական հանձնաժողովային փորձաքննություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 251, 313 և 347 հոդվածներով՝ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Նշանակել կրկնակի դատահոգեբանական հանձնաժողովային փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանին:

Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա) հանրորեն վտանգավոր արարքները կատարելու պահին Արեն Գագիկի Մուրադյանը գտնվել է արդյոք աֆեկտի վիճակում, եթե՝ այո, ապա նշել դրա տեսակը,

բ) հանրորեն վտանգավոր արարքները կատարելու ընթացքում Ա.Մուրադյանի մոտ առկա եղել է աֆեկտի երրորդ փուլը՝ ասթենիկ հոգեվիճակը,

գ) 20 տարեկան երիտասարդի մոտ ասթենիկ դրսևորումները պետք է արտահայտվեն անմիջապես, թե պետք է կրեն որոշակի չափով հետաձգված բնույթ և կա արդյոք գիտության մեջ սահմանված հստակ չափանիշներ, թե աֆեկտի երկրորդ փուլի ավարտից որքան ժամանակ հետո պետք է ի հայտ գան երրորդ փուլին բնորոշ՝ ասթենիկ դրսևորումները և ինչքան ժամանակ պետք է դրանք տևեն ու կոնկրետ ինչպես պետք է դրսևորվեն և Ա.Մուրադյանի կողմից իր ցուցմունքներում և նախորդ փորձաքննության ընթացքում՝ փորձագիտական զրույցի ժամանակ հայտնած դրսևորումները՝ գլխապտույտ, սրտխառնոց, մարմի ծանրացում, շարժվելու անկարողություն, կարծես քնից նոր արթնացած լինելն ու քնելու ցանկությունը արդյոք աֆեկտի երրորդ փուլին բնորոշ դրսևորումներ չեն,

դ) հստակ պատասխանել արդյոք աֆեկտի երրորդ փուլում պետք է լինի կամային (գիտակցված) գործողությունների բացակայություն, թե կատարվածի ոչ լրիվ կամայինություն (գիտակցվածություն),

ե) քանի տարատեսակ ունի աֆեկտը (որպես հոգեկան խիստ հուզմունքի վիճակ) և արդյոք աֆեկտի տարատեսակ է հանդիսանում խիստ լարված հոգեվիճակը,

զ) եթե Ա.Մուրադյանի մոտ առկա է եղել խիստ լարված հոգեվիճակ, ապա արդյոք այն էապես ազդել է նրա գիտակցության և հոգեկան գործունեության վրա՝ նվազեցնելով վարքի գիտակցված կառավարման ունակությունը,

է) Արեն Մուրադյանի մոտ առկա խիստ լարված հոգեվիճակը կոնկրետ ինչից է առաջացել և կոնկրետ ինչ դրսևորում է ունեցել, արդյոք այն պայմանավորված է եղել Ժիրայր Բասմաջյանի կողմից Ա.Մուրադյանի ընկալմամբ իր նկատմամբ իրականացվող հակաբարոյական ու հակաիրավական վարքագծով և այն ինչքանով է ազդել Ա.Մուրադյանի գիտակցության և հոգեկան գործունեության վրա, այսինքն Ա.Մուրադյանը ամբողջությամբ պահպանել է իր վարքը գիտակցված կառավարելու ունակությունը, թե՝ ոչ,

ը) նկատի ունենալով, որ քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Ժիրայր Բասմաջյանը ոտնձգել է Արեն Մուրադյանի նկատմամբ, այդ թվում՝ իրականացրել է ֆիզիկական ոտնձգություն, որն արտահայտվել է վերջինիս ձեռքերը բռնելով՝ ազատությունը սահմանափակելով, քաշքշելով և սուր գործիքով՝ պատառաքաղով կենսական օրգան համարվող գլխի շրջանում մարմնական վնասվածք պատճառելով, որին հաջորդել կամ համընկել է Ա.Մուրադյանի կողմից դանակով հարվածներ հասցնելը, արդյոք այդ պահին Ա.Մուրադյանը գիտակցել է Ժ.Բասմաջյանի ոտնձգության սկզբի ու ավարտի պահերը, թե՝ ոչ, այսինքն՝ Ժ.Բասմաջյանի ոտնձգությունից առաջացած հուզմունքի՝ հոգեվիճակի պատճառով Ա.Մուրադյանը կարող էր չընկալել կամ ճիշտ չընկալել ոտնձգության ավարտի պահը և գիտակցեր, որ անհրաժեշտ է պաշտպանվել կամ շարունակել պաշտպանվել, այսինքն՝ իրականացներ անժամանակ (ուշացած) պաշտպանություն՝ կապված խիստ լարված հոգեվիճակով,

թ) իրեն մեղսագրվող արարքը կատարելիս Արեն Մուրադյանը գտնվել է այնպիսի հուզական վիճակում, որը կարող էր էապես ազդել նրա գիտակցության և հոգեկան գործունեության վրա,

ժ) Արեն Մուրադյանին բնորոշ են այնպիսի անձնային առանձնահատկություններ, որոնք ազդել են նրան մեղսագրվող արարքները կատարելու նրա վարքի վրա,

ի) հաշվի առնելով Արն Մուրադյանի հոգեկան զարգացման մակարդակը, անհատական-հոգեբանական առանձնահատկությունները և հոգեվիճակը կարող էր նա ճիշտ ընկալել գործի համար կարևոր հանգամանքները և ճիշտ վերարտադրել դրանք,

լ) փորձագետներին խնդրել՝ պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ ներառված չեն, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն հոգեբան-փորձագետների իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

Որոշման գործողության ժամկետ սահմանել մինչև փորձաքննության ավարտը:

Փորձագետներին իրավունք վերապահել անհրաժեշտության դեպքում առաջադրել հարցեր և պատասխանել դրանց:

Փորձագետներին պարզաբանել ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 85 հոդվածով սահմանված նրանց իրավունքներն ու պարտականությունները,

նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված՝ քրեական պատասխանատվության մասին:

Փորձագետներին տրամադրել քրեական գործը:

Քրեական գործի քննությունը հետաձգել մինչև փորձագիտական եզրակացությունը ստանալը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ԷԼԱՎԵՐԴՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

2021, ՀՀ Լոռու մարզ, ք.Վանաձոր, Մխիթար Գոշի 6, /0322/2-40-31, lori@court.am

ԴԴԱ-14 Ե- 70024 /22

15.12.2022թ.

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՊԱՐՈՆ ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան.

Կից ուղարկվում է <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական հմալսարան>> հիմնադրամ դատահոգեբուժական փորձաքննությունների եզրակացությունների թիվ Ա 7253458522 հարկային հաշիվ և Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լ. Ալավերդյանի 21.03.2022թ.-ին ԼԴ1/0025/01/20 գործով կայացրած որոշումը:

Առդիր << 12 >> թերթ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ժ.ԱԼՉԱՆԳՅԱՆ

Կատարող՝ Գլխ. հշվապահ Ա. Օհանյան
հեռ.(0322) 2-10-55